35. ԾՈՒՌ ՊԱՌԱՎ

Մեկ մարդ մեկ պառավ կնիկ կառնի։ Էդ պառավ ծուռ կէղնի։ Մարդու ճար կը կտրի էդ պառվու ձեռ։ Ինչ բան օր կիտա, չկրնա էնա։

Մեկ օր օխեմ բուրդ կիտա կնկա ձեռ, կասա.—Մանա զիդա բուրդ, օր ընձի շլվար մի էնինք։

Էդ ծուռ պառավ կառնի զէդ բուրդ, կը մանա, մանա չուրի տարին կը լմենա, նոր կը պրծնի։

Էդ պառվի մարդ կիտա զէդ թելեր պառվին, կասա.—Տար զթելեր ջուլհակի մոտ, շլվար գործել տուր։

Պառավ կառնի, կը տանի ջուլհակի մոտ, ջուլհակի դուռ կը տփա, դուռ շուն մի կէղնի, էդ պառվու վրեն կը հաչա։

— Թավո՜ւ,—կասա պառավ,—ջուլհակ լե մարդու վրեն հաչա, իդա ի՞նչ հա՜ֆ-հա՜ֆ ա, իմալ կէրևա, դու շատ խոսք մեկնիս։ Լուսուն լե հախ տալու, առնելու վրեն էդմլա խոսք էնիս, դու պտի էնիս հա՜ֆ-հա՜ֆ, ես պտի էնիմ ցա՜վ-ցա՜վ, քզի չիմ տա գործել, կը տանիմ իմ Կոկռան սանամոր մոտ։

Առավ զթելեր, գնաց, թափեց քռի չոր չոպեքներու վրեն, դես քաշեց, դեն քաշեց, թելներ կտրտեց։

— Թահո՜ւ, սանահեր,—ասաց,—դու չըս գինա, կը տանիմ Կոկռան սանամոր մոտ։

Առավ զթելեր, գնաց, գնաց մեկ առվի մոտ, տեսավ լիք գորտ էր, թալեց մանած առուն, թողեց, էկավ, ուր մարդուն ասաց.—Մարդ, մանած տարա տվեցի մեր Կոկռան սանամոր։

Մարդ հ՝իմցավ, քաշեց վեռ, ընկավ կնկա վրեն, տուր օր կիտաս։

— Գնա՛,—ըսեց,—զմանած հ՝ուր օր տարեր իս, բի՛ր։

Էդ պառավն էր, հ՝ելավ, տընկ հա՛ տընկ էնելով գնաց դեմի Կոկռան սանամոր մոտ։ Գնաց, դնաց, ճամբեն գունտ մի օսկի գըտավ, դարձավ, օսկին բերեց, տվեց ուր մարդուն։

Պառավ մեկ օր տեսավ շարչիմ հլու-մլու կը ծախա, հըմա կէրտա ուր մարդուց գողտուկ կը բերա էդ օսկին, կիտա էդ շարչուն, ուրին բան ու ման կառնի։

Հ՝իրկուն մարդ օր գիգա տուն, զուր առած բան ուր մարդուն նշանց կիտա, կասա.—Տե՛ս, մարդ, էն գունտ օսկին տվեցի, զիդա պլպլան բաներ առա։

Մարդ օր զէդ կը տեսի, հմա կելի, պառվուն կիտա լանկի հ՝առեջ, տնից դուս կէնա։

Պառավ լե տնից կոբքի, կառնի զուր ճախրակ ու զանկուլակըմ, կէրտա, ձորում մեջ, ճամբու վրեն կը նստի, չընկըռ-չընկըռ զուր ճախրակ կը մանա։

Մեկ օր թագավորիմ դավեք, օր օսկի բառցած կը տանեն, դեվի մեկ օր լսեց էդ չնկոտոց, շոկվավ, գնաց դեմի էդ չնկոտոց։

Պառավ հ՝ելավ չոքըցուց, զուր ճախրակ դրեց վրեն, հեծավ, էկավ տուն։

Մարդ հ՝ելավ, բեռան աչքեց օր՝ լիք օսկի էր։ Օսկիք տարավ նես, դավին էլ մորթեց, հըմա պառվուն խափեց, մտուց թունդիր, ասաց.— Մկա քարե կարկուտ գիգա։

Բերեց թունդրա վրեն ջուլ փռեց, պառվու գլխու վրեն կուտ ցանեց, հավեր թորկեց վրեն։ Հավեր թը՛խկ, թը՛խկ պառվու գլոխ կտցեցին, չուր մարդ օսկիք ու միս տեղավորեց, նոր էկավ զխավեր դեն, քշա՛ էրավ, պառավ հանեց։

Քանիմ օր հ՝ընցավ, նոր թագավորի մարգեր էկան, հիվընդի հ՝ապով, դավի մսի շուռ էկան։

Էդ պառավ ասաց.—Քարե կարկտի տարին մեր տուն գավի միս կեր։

Թագավոր կը խանչա զպառավ ու զէդ մարդ կը տանի ու կը հարցու, կասա.

— Քարե կարկտի տարին ձեր տուն դավի միս կե՞ր։

Մարդ կասա.—Ձեր տուն ակոլի ու ձեր քարե կարկտին։ Քարե կարկուտ ե՞փ ա էկի։ Իմ կնիկ ծուռ ա, զձզի խափեր ա։

Մարդ շատ դոլվաթվորցավ։ Պառավ մեռավ։ Գնաց խորոտ կնիկ մը բերեց, քոշք ու սարեմ շինեց, մտան մեջ։